ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

МЕРИЯ ЕРЕВАНА
«СКОРАЯ МЕДИЦИНСКАЯ ПОМОЩЬ»
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

№ 198
«17» 02 2025 թ.

Ք. Երևան, Հնդկաստանի փող. 40
Հեռ. +374 10 51-03-00
Էլ.հասցե: shtap.ognutyun@yerevan.am

«ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
ՀՎՀՀ՝ 01335288
հասցե՝ ք.Երևան, Մարգարյան փողոց 45 շենք, բն.105
էլ.հասցե՝ fast.global@bk.ru

**Հարգելի՛ պարոն Մկրտչյան,**

«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի և «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի միջև 26.12.2024թ. կնքվել է «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման N «ՇԲՕ-ԳՀՇՁԲ-25/3-1» գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի կատարման ընթացքում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, որոնք ներկայացվել են համապատասխան գրություններով, արձանագրվել է նաև դեպք, երբ «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն ընդհանրապես հրաժարվել է մատուցել ծառայություններ՝ խախտելով ծառայության մատուցման ժամկետը, ինչի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերը, հաշվի առնելով, որ «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն էականորեն խախտել է պայմանագիրը, «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ գործունեության բնույթը՝ տեղեկացնում ենք, որ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն 2025թ. փետրվարի 17-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ չմատուցված ծառայության մասով (ներկայացվում է ստորև):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք 2 (երկու) բանկային օրվա ընթացքում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Հ/Հ 1930066213490100-ին փոխանցել պայմանագրի ապահովման գումար՝ 1.680.000 ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումար՝ 2.439.893 ՀՀ դրամ, **ընդամենը՝ 4.119.893 ՀՀ դրամ** գումարները և վճարված կտրոնները ներկայացնել «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի գնումների բաժին՝ ուղարկելով karine.sargsyan@1-03yerevan.am էլեկտրոնային հասցեին:

| չափ. համարը | Անվանումը | Չափաբաժնի նախահաշվային գումար | Չմատուցված ծառայության նախահաշվային արժեքը | 10% | 15% | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Ford-transit դիզելային միկրոավտոբուսի SU-1, SU-2 ծառայություններ և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասեր, քսայուղեր և այլ օժանդակ նյութեր | 6,000,000 | 5,904,258 | 600,000 | 885,639 | 1,485,639 |
| 3 | Mercedes-Benz Sprinter միկրոավտոբուսի SU-1, SU-2 ծառայություններ և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասեր, քսայուղեր և այլ օժանդակ նյութեր | 4,500,000 | 4,415,093 | 450,000 | 662,264 | 1,112,264 |
| 5 | Nisan միկրոավտոբուսի SU-1, SU-2 ծառայություններ և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասեր, քսայուղեր և այլ օժանդակ նյութեր | 6,300,000 | 5,946,603 | 630,000 | 891,990 | 1,521,990 |
| | | | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 1,680,000 | 2,439,893 | **4,119,893** |

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ